իրենց միսն են ու արիւնը. իսկ այդ կէս-հայ Նուրհանները, որ պիտի մեծանան անիծելով մօրը, որ որբ թողեց իրենց ու փախաւ: Արդեօք իրենց կոտորակուած ինքնութիւնը նրանք ինչպէ՞ս պիտի գտնեն:

Լեւենթ Քազանչին մի Նուրհանի կերպար է Էլիֆ Շաֆաքի *The Bastard of Istanbul* վէպում: Նրա մայրը՝ Շերմին դարձած որբ Շուշանն էլ թողել էր նրան ու իրեն գտած եղբօր հետ Ամերիկա փախել: Լեւենթը մեծացել էր բարդոյթներ կուտակելով, ու այդ բարդոյթները իր երեխաների վրայ էր պարպում: Որքան էլ բարի, վստահելի ու բարեհամբոյր էր դրսում, տան մէջ ուղղակի գազանաբարոյ, տանջում էր իր զաւակներին: «Երեխաների հետ նրա այսքան խստութեան պատճառը այն է, որ ինքը երեխայ ժամանակ շատ է տառապել, երբ իր իսկական մայրը լքել է նրան», մի օր խոստովանել էր նրա թուրք խորթ մայրը:

Իրողութիւն է նաեւ այն պարագան որ մեծ է թիւը կանանց, որոնք չուզեցին բաժանուել թուրքից ու քուրդից ծնած իրենց երեխաներից: Մնացին ու շատ անգամ իրենց ամօթը, իրենց տառապանքը՝ որպէս գաղտնիք գերեզման տարան, վախեցան խօսել՝ իրենց ու իրենց զաւակներին չվտանգելու համար: Գաղտնիքը պահուեց շատ անգամ ամօթից: Լլկուած ու բռնաբարուած, սեռային անմարդկային չարչարանքների ենթարկուած զոհը ինչպէ՞ս բացայայտէր այդ ստորացուցիչ գաղտնիքը եւ ամբողջ կեանքում ապրէր այդ ամօթը ճակատին: Գազանային բռնաբարումով ու զոհին սեռային չարչարանքի ենթարկելով, ոճրագործը ո՛չ միայն իր կենդանական բաւարարութիւնն էր ստանում, ո՛չ միայն փաստում էր իր գերակայութիւնն ու զոհի կամ սեռային արարքը անկար